



ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ  
ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ 2018

«ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՈՒԺԸ. ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԱՆՑՈՒՄԸ» ԶԵԿՈՒՅՑ


2018 թ. հոկտեմբերի 17

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԱՇԽԱՐՀՈՒՄ

ԾՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԳԼՈՒԲԱԼ ՆՎԱԶՈՒՄ

Վերջին 150 տարիների ընթացքում, և հատկապես 1960-ական թվականներից ի վեր, աշխարհի գրեթե բոլոր երկրներում ծնելիության մակարդակը նվազել է: Նախկին իրավիճակի փոխարեն, երբ աշխարհի բոլոր երկրներում ծնելիության մակարդակը մեկ կնոջ հաշվով կազմում էր հինգ և ավել երեխա, այսօր 1 միլիոն և ավել բնակչություն ունեցող երկրների մեծամասնությունում այն 2.5 կամ ցածր է: Ընդ որում, ծնելիության մակարդակն ավելի արագ է նվազել մեծ քաղաքներում, քան փոքրերում և գյուղական վայրերում:



հաշվով 1.5-ից ցածր է: Այս երկրներում տարեցները խոշոր մասնաբաժին ունեն բնակչության կազմում: Արդյունքում կառավարությունների համար սոցիալական ապահովության համակարգերի համարժեք ֆինանսավորման և տարատեսակ ծառայությունների (օրինակ՝ առողջապահական) հարմարեցման խնդիրներ են առաջանում: Ցածր ծնելիությունը նաև նշանակում է, որ, ի վերջո, ավելի քիչ թվով մարդիկ կմտնեն աշխատուժ, ինչը մտավախություն է առաջացնում տնտեսական աճի առումով:

Մեկ կնոջ հաշվով 4 և ավել երեխա ծնելիության գործակից ունեցող աշխարհի 43 հատվածներից 38-ը Աֆրիկայում է: Աֆրիկայից դուրս, նման գործակից ունեն Աֆղանստանը, Իրաքը, Պաղեստինը, Թիմոր-Լեստեն և Եմենը: Երկարատև բարձր ծնելիության պատճառով ակնկալվում է, որ մինչև 2050


Ամբողջական զեկույցի համար այցելեք [unfpa.org/swop](http://unfpa.org/swop):

Վերարտադրությանը վերաբերող քաղաքականություններով, կառավարությունները պետք է կարողանան ապահովել մարդկանց՝ սեփական ընտրությամբ ցանկալի թվով երեխաներ ունենալու հնարավորությունը: Որովհետև այն ահռելի ազդեցություն է ունենալու երկրի, ամենալայն խնամով, ապագայի վրա: Դա է **ընտրության ուժը**:

Հայաստանում երեխաների առավել ցանկալի թվով **երեքն է**, մինչդեռ ընտանիքները ունենում են **1-2-ը**:

Նիգերը՝ աշխարհում ծնելիության ամենաբարձր գումարային գործակից ունեցող երկիրը (մեկ կնոջ հաշվով՝ 6.6), ունի բնակչության տարեկան աճի 3.84 տոկոս տեմպ: Երկրի բնակիչների երկուսից մեկը 15 տարեկանից փոքր է:

Մեկ միլիոն և ավել բնակիչ ունեցող երկրներից 22-ում այդ գործակիցը մեկ կնոջ




թվականը աշխարհի բնակչության ակնկալվող աճի կեսից ավելին, այսինքն՝ 2.2 միլիարդից 1.3-ը, բաժին է ընկնելու Ենթասահարային Աֆրիկային:

Աշխարհի գրեթե 53 երկրում և տարածքում ծնելիության մակարդակը տարիներ և նույնիսկ տասնամյակներ շարունակ ցածր է եղել 2.1-ից՝ պարզ վերարտադրության մակարդակից: Դրանց շարքում Չինաստանի Տայվանը ծնելիության ամենացածր ցուցանիշն ունի՝ 1.1՝ մեկ կնոջ հաշվով:


### ԵՐԿՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ

Այդուհանդերձ, տարբեր երկրներում կառավարությունները տարբեր տեսակետներ ունեն բնակչության թվաքանակի և այն փոփոխելու վերաբերյալ:




### ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Արևելյան Եվրոպայի բոլոր երկրներում ծնելիության գումարային գործակիցը ցածր է պարզ վերարտադրության մակարդակից (2.1 երեխա՝ մեկ կնոջ հաշվով), որոշ դեպքերում՝ ցածր է 1.5-ից: Այս շարքում է նաև Հայաստանը: Իր անմիջական հարևանների համեմատությամբ, Հայաստանում ծնելիության գործակիցն ավելի ցածր է:



Այս տարածաշրջանի համար խնդիր է նաև բարձր միգրացիան: Այդ առումով Վրաստանը գերազանցում է Հայաստանին:



Արևելյան Եվրոպայի երկրների մեծամասնությունում մահացողների թիվը գերազանցում է ծնվողների թիվը: Հայաստանում բնական հավելածը դեռևս դրական է՝ 10300 (2017):

Մահացությունը հատկապես բարձր է տղամարդկանց դեպքում: Բելառուսում, ՌԴ-ում և Ուկրաինայում տղամարդկանց կյանքի տևողությունն ավելի քան 10 տարով կարճ է կանանց կյանքի տևողությունից: Հայաստանում այդ տարբերությունը կազմում է 7 տարի:

Ամբողջական զեկուլյցի համար այցելեք [unfpa.org/swop](http://unfpa.org/swop):